

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒԼԻՍ 2017

Ե. Կիր. Չկնի Հոգեգալստեան /ԹԻԻ 14

SUNDAY, July 9, 2017

Fifth Sunday After Pentecost – N0/14



TODAY'S BIBLE READINGS

Romans 9:30-10:4 | Matthew 13:24-30 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ ՔՉՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan


Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Miss Lori Antounian

Organist: Mr. Karen Manucharyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՀՈՌՄԷԱՅԻՆԵՐՈՒՆ 9:30-10:4

30Ուրեմն ի՞նչ ըսենք: Յետեւեա՛լը, թէ հեթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, ա՛յն արդարութեան՝ որ հաւատքէն է.

31իսկ Իսրայել՝ որ հետամուտ էր արդարութեան Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: **32**Ինչո՞ւ. որովհետեւ ուզեց արդարանալ ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով: Արդարեւ անոնք գայթեցան սայթաքումի քարին վրայ,

33ինչպէս գրուած է. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու գայթակողութեան ժայռ մը, եւ ո՛վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չըլլայ»:

1Եղբայրներ՛ր, սիրտիս բաղձանքն է, նաեւ Աստուծոյ ուղղած աղերսանքս՝ Իսրայելի համար, որ անոնք փրկուին: **2**Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ո՛չ թէ գիտակցութեամբ: **3**Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրե՛նց արդարութիւնը՝ անոնք չհպատակեցան Աստուծոյ արդարութեան: **4**Որովհետեւ Քրիստո՛ս է Օրէնքին վախճանը՝ ամեն հաւատացեալի արդարութեան համար:

ROMANS 9:30-10:4

30 What shall we say then? That the Gentiles, which followed not after righteousness, have attained to righteousness, even the righteousness which is of faith.

31 But Israel, which followed after the law of righteousness, hath not attained to the law of righteousness.

32 Wherefore? Because they sought it not by faith, but as it were by the works of the law. For they stumbled at that stumblingstone;

³³ As it is written, Behold, I lay in Sion a stumblingstone and rock of offence: and whosoever believeth on him shall not be ashamed.

¹ Brethren, my heart's desire and prayer to God for Israel is, that they might be saved.

² For I bear them record that they have a zeal of God, but not according to knowledge.

³ For they being ignorant of God's righteousness, and going about to establish their own righteousness, have not submitted themselves unto the righteousness of God.

⁴ For Christ is the end of the law for righteousness to every one that believeth.

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 13:24-30

24 Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: 25 Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: 26 Երբ խոտը ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն ատեն որոմն ալ երեւցաւ: 27 Ուստի հողատիրոջ ծառաները մօտեցան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրեմն որոմը ուրկէ՞ է»: 28 Ան ալ ըսաւ անոնց. «Թշնամի մը ըրած է ասիկա»: Ծառաները ըսին իրեն. «Ուստի կ'ուզե՞ս որ երթանք ու քաղենք զանոնք»: 29 Իսկ ան ըսաւ. «Ո՛չ, որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք անոր հետ: 30 Թո՛ղ տուէք որ երկուքն ալ միասին աճին՝ մինչեւ հունձքի ատենը»: Եւ հունձքի ատենը պիտի ըսեմ հնձողներուն. «Նախ որո՛մը քաղեցէք ու խուրձ-խուրձ կապեցէ՛ք՝ այրելու համար, իսկ ցորենը ժողվեցէ՛ք իմ ամբարս»»:

MATTHEW 13:24-30

²⁴ Another parable put he forth unto them, saying, The kingdom of heaven is likened unto a man which sowed good seed in his field:

25 But while men slept, his enemy came and sowed tares among the wheat, and went his way.

26 But when the blade was sprung up, and brought forth fruit, then appeared the tares also.

27 So the servants of the householder came and said unto him, Sir, didst not thou sow good seed in thy field? from whence then hath it tares?

28 He said unto them, An enemy hath done this. The servants said unto him, Wilt thou then that we go and gather them up?

29 But he said, Nay; lest while ye gather up the tares, ye root up also the wheat with them.

30 Let both grow together until the harvest: and in the time of harvest I will say to the reapers, Gather ye together first the tares, and bind them in bundles to burn them: but gather the wheat into my barn.



Հայ Առաքելական Եկեղեցին կը տօնէ Սրբոց Թարգմանչաց տօնը

«Սակայն նա ծնունդ որ սնունդ Դառնայ:
Ծնունդ, որ ծնունդը,
Եղա՛ւ, որ լինէ՛նք,
Եւ անմահացա՛ւ,
Որ անմահանա՛նք»:
ՊԱՐՈՅՐ ՍԵԻՎԿ



Սուրբ թարգմանիչ
Վարդապետներու տօնը Հայ
Ժողովուրդի
ամենանուիրական եւ
սիրուած ազգային-

Եկեղեցական տօներէն է:

Թարգմանիչ վարդապետներու յիշատակը Հայ եկեղեցին կը տօնէ տարին երկու անգամ: Առաջինը կը կոչուի «Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ» եւ կը տօնուի Հոգեգալստեան չորրորդ կիրակիին յաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կը կոչուի «Տօն մեր սուրբ թարգմանիչ վարդապետներուն՝ Սահակին եւ Մեսրոպ Մաշտոցին, եւ անոնց սուրբ աշակերտներուն՝ Եղիշէ Պատմիչին, Մովսէս Քերթողին, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային, Գրիգոր Նարեկացիին եւ Ներսէս Կլայեցիին», որ շարժական է եւ տօնը կը նշուի Հոկտեմբեր 3-էն մինչեւ Նոյեմբեր 7-ը ինկած ժամանակամիջոցին մէջ:
Թարգմանիչ ընդհանուր անունին տակ յայտնի են Ս. Մեսրոպ

Մաշտոցին եւ Ս. Սահակ Պարթեւին աշակերտած շուրջ հարիւր սաներ:

Սկզբնական շրջանին կային յատուկ թարգմանիչներ, որոնք արարողութիւններու ժամանակ Ս. Գիրքի հատուածները բանաւոր կը թարգմանէին հայերէն: Սակայն այդ բաւարար չէր: Այս խնդրին համար մտահոգուած էր Ս. Մեսրոպ Մաշտոցը: Հայը զրկուած էր Ս. Գիրքը ընթերցելու եւ ճշմարտութիւնն ու փրկութիւնը ձեռք բերելու հնարաւորութենէն: Ան անընդհատ կը մտածէր Ս. Գիրքը հայերէնի վերածելու գաղափարի մասին, որուն իրականացման համար կը դիմէ Հայոց կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթեւին եւ մեծ ընդունելութիւն կը գտնէ: Պարզուած է, որ կաթողիկոսը նոյնպէս մտահոգուած է այդ հարցով: Անոնց ծրագիրներուն իր հաւանութիւնը կու տայ նաեւ թագաւորը՝ Վռամշապուհ Արշակունին: Ս. Մաշտոցը, իր հետ վերցնելով իր աշակերտները, կ'երթայ Ասորիքի Միջագետք, որ կը գտնուի Եդեսիոյ մէջ, ուր եւ տեղի կ'ունենայ ամենամեծ հրաշքներէն մէկը. «Մեսրոպը կ'ապաւինի Աստուծոյ պահքով ու աղօթքներով: Եւ Աստուած, որ կը կատարէ իրմէ երկիւղ կրողներու կամքը, կը լսէ Մեսրոպի աղօթքները եւ ցոյց կու տայ անոր գիրերը սքանչելի տեսիլքով, եւ ոչ թէ երագի մէջ քնացած ժամանակ, այլ արթուն աչքով իմանալի եւ աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը կը տեսնէ, որ աջ ձեռքի դաստակով կը գրէ վէմին վրայ, որ դրուած էր անոր առջեւը: Եւ գիրի փորուածքը այնպէս էր, ինչպէս որ ձեռքը ձեւ կու տար վէմին վրայ. եւ գիրերու տարբերութիւններն ու անունները կը ձեւաւորուէին Մեսրոպի միտքին մէջ» (Ս. Խորենացի «Հայոց պատմութիւն»):

Ունենալով հայ նշանագրերը՝ Ս. Մեսրոպը Հռոփանոսի հետ կը սկսի ձեւաւորել անոնք: Ստանալով արդէն գրելու պատրաստ

տառերը՝ Ս. Մեսրոպը առաջին անգամ կը թարգմանէ Ս. Գիրքի հետեւեալ տողը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» ('Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը'), որ քաղած էր Սողոմոնի «Առակաց» գիրքէն: Ահա այս էր, որ եղաւ առաջին հայատառ նախադասութիւնը՝ գրուած հայ ուսուցիչի ձեռքով: Բացայայտ իմաստութիւն մը, որ բոլորին համար հասկնալի պէտք է դառնար խօսքը եւ Գիրքը ընթերցելու անհրաժեշտութեան գաղափարը: Այս Աստուածատուր նուէրէն յետոյ Ս. Մեսրոպը կը վերադառնայ Յայաստան՝ հետը բերելով անգին գանձ մը, որ պիտի ըլլար Յայ ժողովրդի հետագայ դարերու մաքառման զէնքը, ինչպէս նաեւ՝ անոր գոյատեւման առհաւատչեան: Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ջանքերով Յայաստանի մէջ կը սկսին բացուիլ դպրոցներ, ուր կ'ուսուցանուին Յայ գիրերը: Անոնք իրենց աշակերտներուն հետ ձեռնամուխ կ'ըլլան Ս. Գիրքի թարգմանութեան: Այսպէսով, քրիստոնէութիւնը կը հայացուի եւ կը դառնայ հայու կենսակերպը:




ARMENIAN FEAST OF HOLY TRANSLATORS

Translators and interpreters in Armenia annually celebrate their processional day on the second Saturday in October, that is known as Holy

Translator's Day or Targmanchats. This is an official observance, that was created by the Armenian Apostolic Church in order to honour a group of literary figures, who translated the Bible into Armenian language.

Conversion of Armenia to Christianity required the translation of the Holy Bible and creation of masses in Armenia. But first there was a need to create a new alphabet, that would meet the requirements of that time. Armenian alphabet was invented by saints Mesrob Mashdots, Sahag Bartev and King of Armenia Vramshabouh. The group of translators translated the Old Testament, while Mesrob Mashdots translated the New Testament.

The translators of the Holy Bible were canonized by the Armenian church. Celebration the feast of Holy Translator's Day commemorates the people, who created the Armenian alphabet and became the founders of Armenian literature, written language and schools.





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Յովիւ եւ Ծիսական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Pastor and Parish Council



Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ և Յառաջիկայ Ձեռնարկներ

Պայծառակերպութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Վարդապետ – Կիրակի, 23 Յուլիս 2017

Վերափոխումն Ս. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 13 Օգոստոս 2017

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պագար – Շաբաթ և Կիրակի – Հոկտեմբեր 28 և 29, 2017

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման և Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Transfiguration of our Lord -

Sunday, July 31st

Feast of the Assumption of the Holy Mother of God -

Sunday, August 13th, 2017

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children's Christmas /CFFA –


Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒԼԻՍ 2017

**Նազելի եւ Յասմիկ Եւկեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց՝**

ՊԵՐՃՈՒՅԻ

**ՄԻՍԻՍԵԱՆ ԵԵԿԵԱՆԻ
(BERJUHI MISSISSIAN EGIAN)**

Մահուան առաջին տարելիցին

ԵՒ

**ՅՈՎՍԷՓ ԵԵԿԵԱՆԻ
(HOVSEP EGIAN)**

Յոգևոյն ի հանգիստ



**Տիար Թորոս Քիլավուզի,
Տ. եւ Տիկ. Նորայր եւ Փայլին Կիւրնակիլի,
Տ. եւ Տիկ. Ռոպեր եւ Գարին Քիլավուզի,
Թոռները՝ Մարթէնի, Մելիսայի, Պիանքայի եւ Սթիվընի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝**

ԱԶԱՏՈՒՅԻ

**ԷՎՅԱՆ-ՔԻԼԱՎՈՒԶԻ
(AZADOUHI EVHAN -KILAVUZ)**

**Մահուան 40-ին առիթով
(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին
մէջ)**



Տիար Գեորգ Աղազարեանի,
Տ. եւ Տիկ. Փանոս եւ Սալբի Աղազարեանի,
Տ. եւ Տիկ.Գեորգ եւ Լոռի Աղազարեանի
եւ զաւկին՝ Ամանտայի,
եւ համայն Աղազարեան, Մինասեան,
Կուլեան եւ Լափաճեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ԼՈՒՍԻ
ՄԻՆԱՍԵԱՆ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ
(LUCIE MINASSIAN AGHAZARIAN)
Մահուան առաջին տարելիցին առիթով



Տիկ. Սօնիա Պարոնեանի եւ զաւակներուն՝
Ալեքսայի, Քէյվընի եւ Գարինայի,
Տ. եւ Տիկ. Տօմինիք եւ Նորա Գեմբիթէլի
եւ զաւկին՝ Ճէմայի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝
ԳԵՈՐԳ ՊԱՐՈՆԵԱՆԻ
(KEVORK BARONIAN)
Մահուան 7-րդ տարելիցին առիթով



ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of June/July
have been received with great appreciation 2017***

Mr. & Mrs. Krikor & Rose Dikranian \$1000, Dr. & Mrs. Baghdig Agopyan \$100, Mr. & Mrs. Avedis & Arshalouys Djhanian \$50, Mr. Manvel Markosyan \$40.

HOKEHANKISD:

**THE LATE ODETTE ARAXI SETRAKIAN
Mrs. Arda Setrakian \$150.**

THE LATE SAVAK KANAR & HRIPSIME ASADURYAN

Mr. & Mrs. Krikor & Armenie Kanar, Mr. Haig Kanar \$100, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$25.

THE LATE SARKIS OZOGLU

Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan \$50, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$25.





SOL



ՎԱՐՂԱՎԱՌ / VARTAVAR
ՊԱՅՇԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵՈՒՆ ՄԵՐՈՅ
ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

FEAST OF TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST

ՈՒՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

DIVINE LITURGY

Կիրակի, 23 Յուլիս 2017, ժամը 10:30-ին / Sunday,
July 23, 2017 at 10:30 am

Պատարագիչ`- Celebrant

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՅՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Ս. Սեղանին պիտի սպասարկեն Բրշ.
Սարկաւազները: Պատարագի երգեցողութիւնը
պիտի կատարէ «Կոմիտաս» Դպրաց Դասը:**

Ղեկավար` Լորի Անթունեան

Choirmaster: Lori Antounian

Երգեհոնահար` Կարէն Մանուչարեան

Organist: Karen Manucharyan

**Յաւարտ Ս. Պատարագի «Մարի Մանուկեան»
սրահին մէջ տեղի պիտի ունենայ ճաշկերոյթ,**

Եկեղեցոյս Ծխական Խորհուրդին կողմէ:

After the Divine Liturgy lunch, will be held in

“Marie Manoogian” hall by Parish Council.

Մուտքի Լուր՝ \$20 / Entrance Fee \$20

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066



SOL



**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

**FEAST OF ASSUMPTION OF THE HOLY VIRGIN MARY
& GRAPE BLESSING**

**ՈՒՆՏԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ
DIVINE LITURGY**

Կիրակի, 13 Օգոստոս 2017, ժամը 10:30-ին / Sunday,
August 13, 2017 at 10:30 am

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ
Հոգևոր Հովի

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Ա. Սեդանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկալազները:
Պատարագի երգեցողությունը պիտի կատարե
«Կոմիտաս» Դպրաց Դասը:**

**Ղեկավար՝ Լոռի Անթունյան / Choirmaster: Lori Antounian
Երգեհոնահար՝ Կարեն Մանուչարյան / Organist: Karen
Manucharyan**

**Յաւարտ Ա. Պատարագի Ծխական Խորհուրդի
Նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ խորովածի
սպասարկութիւն եւ Տիկնանց Յանձնախումբի
կազմակերպութեամբ «Անուշեղէնի Վաճառք»
Եկեղեցւոյ շրջափակին մէջ:**

• **After the Divine Liturgy BBQ will be held in the church front
garden, organized by Parish Council &**

• **Bake Sale by Ladies Auxiliary.**

Մուտքի Նուէր՝ \$20 / Entrance Fee \$20



ԴՊՐԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱԾԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Եղիա Ա Քինյ. Քերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միլեյի Հասարակական, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.